ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ. ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին շուրջ կես տարվա ընթացքում կովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումների արդյունքում ստեղծվել է նոր բնույթի մի իրավիճակ: Այն, սակայն, իրենից չի ներկայացնում ուժերի վերջնական փոխդասավորվածություն (անգամ՝ կարճաժամկետ կտրվածքով), այլ՝ համակարգային առումով հանդիսանում է նոր (թերևս՝ աննախադեպ) փոխդասավորվածության սկիզբ:

Երկրորդ կարևոր դիտարկումը. Խորհրդային Միության փլուզումից հետո հերթական անգամ անգամ գործընթացները կովկասյան տարածաշրջանի հյուսիսային և հարավային հատվածներում օրգանական առումով էապես փոխկապակցվեցին և, սկսած օպերատիվ գործողություններից մինչև աշխարհաքաղաքական շարժերը, կովկասյան երկու հատվածներն այլևս տրամաբանորեն փոխլրացնում են միմյանց:

Հյուսիսային Կովկասի «ակտիվացումը»

Կովկասյան տարածաշրջանում նոր բնույթի գործընթացը, որի սկիզբը նշանավորվեց 2003թ. նոյեմբերին վրացական «վարդերի հեղափոխությամբ», տալիս էր բոլոր հիմքերը պնդելու, թե հետագա գործողությունների (համաձայն գործողությունների զարգացման «դասական սխեմայի»[1]) «ակտիվ դաշտը» հանդիսանալու է Հարավային Կովկասը: Սակայն գերազանցապես նույն Հարավային Կովկասում ռուսական ռեսուրսների սակավության[2] պատճառով «ակտիվացումը» տեղափոխվեց Հյուսիսային Կովկաս:

Ներկայում Հյուսիսային Կովկասում ընթացող զարգացումներն են, փաստորեն, հանդիսանում կովկասյան փոխդասավորվածության որոշիչ գործոններ:

---

[1] Status quo-ի խախտումը մեկ ուղղությամբ առաջացնում է հակազդեցություն հակառակ ուղղությամբ: Ընդ որում, քանի որ գործողությունների տրամաբանությունը ի սկզբանե սահմանափակված է արդեն իսկ գոյություն ունեցող համակարգով, ապա աշխարհաքաղաքական տեսանկյունից զարգացումները պարզապես չեն կարող դուրս գալ այդ համակարգի ներքո գտնվող տարածաշրջանից, քանի որ տվյալ տարածաշրջանից դուրս գործում է այլ համակարգ: Բացառություն են կազմում *հակահամակարգային* զարգացումները, որոնք, խախտելով առկա կարգերը, կարող են խախտել նաև հաստատված աշխարհաքաղաքական փոխդասավորվածությունը (օրինակ՝ «Մեծ Մերձավոր Արևելք» նախագիծը):

[2] Աջարական և հարավօսական ճգնաժամերը՝ որպես ցուցիչ:

«Ակտիվացման» սկիզբը թվագրվում է սույն թվականի (ս.թ.) մայիսի 9-ով[1], երբ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի կապակցությամբ Գրոզնիի «Դինամո» մարզադաշտում անցկացվող տոնախմբությունների ժամանակ *VIP*- նստելատեղերի տակ տեղադրված ռումբի պայթյունից զոհվեց Չեչնիայի նախագահ Ահմադ Կադիրովը:

Ս.թ. հունիսի 21-ին, տեղի ժամանակով 22:00-ին մի քանի հարյուր (ըստ տարբեր գնահատականների՝ շուրջ 300) գրոհայիններ, որոնց միջուկը կազմում էին ինգուշները, բաժանված լինելով մանր ջոկատների, գրոհեցին Ինգուշիայի Նազրան և Կարաբուլակ քաղաքների մոտ գտնվող պահակակետերի վրա և զինաթափելով ու գնդակահարելով այնտեղ գտնվող ՄՀՕՋ-ականներին (Միլիցիայի հատուկ օպերատիվ ջոկատ, ռուս.՝ *ОМОН, Отряд милиции оперативного назначения*)՝ հարձակվեցին նույն Նազրան[2] և Կարաբուլակ քաղաքների վրա[3]: Նազրանում հարձակման են ենթարկվել Ինգուշիայի ներքին գործերի նախարարության[4], Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ, ռուս.՝ *ФСБ, Федеральная служба безопасности*) և քննչական գլխավոր մեկուսարանի (որտեղ բանտարկված են մի քանի տասնյակ գրոհայիններ և նրանց կողմնակիցներ) շենքերը, Կարաբուլակում՝ ոստիկանության քաղաքային բաժանմունքը, ՄՀՕՋ-ի շտաբը և Ռուսաստանի Դաշնության ներքին զորքերի զորակայանը: Բացի այդ, նույն Կարաբուլակում գրավվել է մեկ զինապահեստ[5], որտեղից հարձակվողները *КамАЗ* տեսակի երկու բեռնատարներով զենք են տարել:

Տագնապով ոտքի բարձրացված զորքերը նետվել են Մագաս՝ պահպանելու նախագահ Զյազիկովի անվտանգությունը, ուստի Նազրան և Կարաբուլակ քաղաքները հունիսի 21-ի լույս 22-ի ողջ գիշերվա ընթացքում գտնվել են գրոհայինների տրամադրության ներքո, որոնք այդ քաղաքներում անհապաղ անցկացրել են «զտումներ»՝ սպանելով իրավապահ մարմինների մի շարք ղեկավարների:

Գիշերվա ընթացքում սպանվել են Ինգուշիայի ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Աբուկար Կոստոևը՝ իր թիկնազորով, նրա տեղակալ Զյաուդին Կո-

---

[1] Հարկ է նշել, որ, ըստ ամենայնի, մայիսի 9-ը չեչեն գրոհայինների մոտ յուրահատուկ կերպ է ընկալվում: Հիշեցնենք, որ 2002թ. մայիսի 9-ին Դաղստանի Կասպիյսկ քաղաքում անցկացվող շքերթի ժամանակ տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհվեցին 43 հոգի:

[2] Թեև Ինգուշիայի մայրաքաղաքը 1990-ական թթ. կեսերին դարձավ նորակառույց Մագասը (Ինգուշիայի Հանրապետության նախագահ Մուրադ Զյազիկովի նստավայրը Մագասում է), սակայն Նազրանը շարունակում է հանդիսանալ այդ հանրապետության ամենամեծ և գլխավոր քաղաքը:

[3] Մոտավորապես մեկ ժամ անց հարձակման են ենթարկվել նաև Սլեպցովսկայա և Օրջոնիկիձևսկայա բնակավայրերը (станицы):

[4] Ինգուշիայի ներքին գործերի նախարարության կենտրոնական ապարատի վրա հարձակման տեղեկությունը Մոսկվա է հասել տեղի ժամանակով 22:30-ին:

[5] Ս.թ. հունիսի 22-ին Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարար Ռաշիդ Նուրգալիևը հայտնեց, թե նախորդ օրը և գիշերվա ընթացքում Ինգուշիայում «հարձակման են ենթարկվել ութ կետեր»:

տոնը, Նազրան քաղաքի դատախազ Մուխարբեկ Բուզուրտանովը, նրա տեղակալներ Արապիևն ու Վեձիժևը, Նազրանի շրջանի դատախազ Բիսլան Օզիևը, Ինգուշիայի դատախազության կարևոր գործերով քննիչ Թիմուր Գետագազովը և այլք: Ընդհանուր առմամբ սպանվել են իրավապահ մարմինների 98 աշխատակիցներ, մինչդեռ գրոհայիններ-ի կորուստներից հայտնի է Նազրանում սպանված երկու հոգու մասին միայն:

Ս.թ. հուլիսի 13-ին Գրոզնիում մահափորձ կատարվեց Չեչնիայի նախագահի պաշտոնակատար (Կադիրովի օրոք՝ վարչապետ) Սերգեյ Աբրամովի նկատմամբ: Աբրամովը փրկվեց, սակայն զոհվեց վերջինիս թիկնազորի անդամ, «Ալֆա» հատուկ նշանակության ջոկատի ենթասպա Սերգեյ Ցապլինը. ֆուգասը պայթել էր թիկնազորին պատկանող *Волга* ավտոմեքենայի մոտ:

Ս.թ. օգոստոսի 21-ին[1] մի քանի հարյուր (ենթադրվում է՝ 200-300) գրոհայիններ (գերազանցապես՝ չեչեններ) հարձակումներ գործեցին Գրոզնիի մի քանի ընտրատեղամասերի և անվտանգության ուժերի (իրավապահ մարմիններ, անվտանգության ծառայություն, բանակ) կայանների վրա: Հատկանշական է, որ գրոհայինները հետևել են նույն մարտավարությանը, ինչ հունիսի 21-ի լույս 22-ի գիշերը Ինգուշիայում տեղի ունեցած դեպքերի ժամանակ: Ըստ պաշտոնական տվյալների, դաշնային ուժերը տվել են 42 սպանված: Ըստ ոչ պաշտոնական տվյալների, այդ թիվը հասնում է 100-ի:

Ս.թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում, Կաշիրսկոյե մայրուղու վրա գտնվող ավտոբուսի կանգառում ռումբ պայթեցվեց: Զոհեր չեղան, վիրավորվեցին չորս հոգի[2]:

Նույն օրը՝ օգոստոսի 24-ի երեկոյան, Մոսկվայի ժամանակով 23:00-ին, մեկ րոպե տարբերությամբ[3] ռադարների էկրաններից անհետացան Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանից դեպի Վոլգոգրադ թռչող *Ту-134* և դեպի Սոչի թռչող *Ту-154* ինքնաթիռները: Ըստ պաշտոնական հաղորդագրության, ինքնաթիռներն օդում պայթեցրել[4] են ինքնասպան ահաբեկիչները: Զոհերի ընդհանուր թիվը կազմել է 89 հոգի[5]:

---

[1] Ութ օր անց՝ օգոստոսի 29-ին, Չեչնիայում կայանալու էին նախագահական ընտրություններ:

[2] Հիշեցնենք, որ նույն Կաշիրսկոյե մայրուղու վրա 1999թ. սեպտեմբերի 13-ին պայթեցվեց բնակելի մի շենք, որի արդյունքում զոհվեցին 124 հոգի: Դեպքից 4 օր առաջ՝ սեպտեմբերի 9-ին, Մոսկվայի Գուրյանով փողոցում պայթեցվել էր ևս մեկ բնակելի շենք, որի արդյունքում զոհվել էին 109 հոգի: Նույն՝ 1999թ. օգոստոսի 2-ին սկսվել էր չեչենական երկրորդ պատերազմը, օգոստոսի 9-ին ՌԴ նախագահ Բորիս Ելցինը ԱԴԾ տնօրեն Վլադիմիր Պուտինին նշանակեց ՌԴ վարչապետի պաշտոնակատար՝ այդ պաշտոնից ազատելով Սերգեյ Ստեպաշինին:

[3] Այլ տվյալներով՝ 3 րոպե:

[4] Վոլգոգրադ թռչող Ту-134-ը ընկել է Տուլայի մարզում, իսկ Սոչի թռչող Ту-154-ը՝ Ռոստովի մարզում:

[5] Ըստ Միջպետական ավիացիոն հանձնաժողովի, զոհերի թիվը կազմել է 93 հոգի: Պետք է ենթադրել, որ «ավելացած» չորս հոգին ինքնաթիռներում են գտնվել ապօրինի կերպով, հավանաբար՝ կաշառքի միջոցով:

Ս.թ. օգոստոսի 31-ին Մոսկվայի մետրոյի *Рижская* կայարանի մուտքի մոտ ինքնասպան ահաբեկչի կողմից ռումբի պայթյունի հետևանքով զոհվեցին 10, վիրավորվեցին 51 հոգի։

Ս.թ. սեպտեմբերի 1-ին, տեղի ժամանակով 09:03-ին, գրոհայինների 32 հոգանոց զորաջոկատը Հյուսիսային Օսիայի Բեսլան քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցում պատանդ է վերցնում շուրջ 1 200 մարդու (մեծամասնությունը՝ երեխաներ)։ Իրավիճակը իր ավարտն է գտնում սեպտեմբերի 3-ին, երբ ռուսական հատուկ նշանակության «Ալֆա» և «Վիմպել» ջոկատները տեղական ժամանակով մոտավորապես 13:10-ին սկսում են դպրոցի շենքի գրոհը։

Ս.թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՌԴ արտակարգ իրավիճակների նախարարության տվյալներով՝ բեսլանյան ողբերգության արդյունքում զոհվել են 331 հոգի, այդ թվում՝ 172 երեխա։ Բեսլանի ուսուցչական հանձնաժողովի տվյալներով՝ պատանդների թիվը իրականում կազմել է 1221 հոգի։

Մարտավարական հետևություններ

Վերը ներկայացվածից կարելի է կատարել մի շարք օպերատիվ հետևություններ, որոնք թույլ են տալիս ընդհանրացնել «հում տեղեկատվությունը»։

Ահմադ Կադիրովի սպանությունը

Ահմադ Կադիրովի սպանությունը վկայում է, որ ռուսների կողմից Չեչնիայում հաստատված անվտանգության ցանցն ունի էական թերություններ։ Հիմնական թերությունն այն է, որ Կրեմլին այդպես էլ չի հաջողվում դաշնության այդ սուբյեկտում ստեղծել համառուսաստանյան անվտանգության կառույցի չափանիշներին համահունչ և գաղափարախոսական (ՌԴ անվտանգության համակարգի գաղափարախոսության) առումով մեկ ընդհանուրի մաս կազմող անվտանգության համակարգ։

Փաստորեն, կենտրոնը ստիպված է Չեչնիայում բացառություն անել և որոշակի առումով գործել տեղի անվտանգության համակարգի կանոններով, ինչն իր բնույթով խորթ լինելով համառուսական անվտանգության համակարգին՝ Մոսկվայի համար Չեչնիայում ստեղծում է բավականին լուրջ խնդիրներ[1]։

[1] Կրեմլի քաղաքականությունը Չեչնիայում՝ հենվել «հավատարիմ» թեյփերի (ցեղերի) վրա (Ահմադ Կադիրով և նրա համախոհներ)՝ ընդդեմ «թշնամի» թեյփերի, ուստի և չեչենների բաժանումը թշնամու և ոչ թշնամու, չի կարող անվտանգության ամուր համակարգի ստեղծման հիմք հանդիսանալ։

Որպես ասվածը հաստատող փաստարկներ՝ ուշադրություն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա։

Առաջին՝ Շամիլ Բասաևի և Ասլան Մասխադովի ծրագրավորման կենտրոններին վաղօրոք հայտնի էին Ահմադ Կադիրովի գտնվելու վայրը և ժամանակը։ Ընդ որում, նման տեղեկությունները գաղտնի են պահվել անգամ Չեչնիայի նախագահի աշխատակազմում։ Այնտեղ առկա տեղեկությունների համաձայն, Ա.Կադիրովը, որը մայիսի 7-ին Կրեմլում ներկա էր Վ.Պուտինի՝ Ռուսաստանի նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ երդման արարողությանը, պետք է Գրոզնի վերադառնար միայն մայիսի 10-ին։

Երկրորդ՝ Բասաևի կողմնակիցներին հաջողվել է պահակակետերից անցկացնել *բավականին քանակությամբ* պայթուցիկ և իրականացնել պայթյունը։

Թեև ռուսական անվտանգության մարմինները շտապեցին առաջ քաշել այն վարկածը, թե պայթուցիկը Գրոզնիի «Դինամո» մարզադաշտի *VIP*-նստելատեղերի տակ տեղադրված է եղել դեռևս մեկ տարի առաջ, երբ իրականացվում էր մարզադաշտի վերանորոգումը, սակայն, մեր կարծիքով, նման վարկածի ներկայացումը պարզապես միտված է կոծկելու սեփական բացթողումները։ Նման կարգի միջոցառումներից առաջ, երբ սպասվում է հանրապետության նախագահի այցը, վերջինիս անվտանգության ծառայությունը ստուգման է ենթարկում այցելության վայրը (դա մանրակրկիտ արվում է հատկապես Չեչնիայում)։

Երրորդ՝ առաջին երկու կետերը վկայում են, որ Ա.Կադիրովի մերձավորագույն շրջապատում (պետք չէ բացառել նաև Չեչնիայում գործող անվտանգության դաշնային մարմիններում) շոշափելի կերպով ներկայացված է Շ.Բասաևի և Ա.Մասխադովի հետախուզությունը։ Զրկված լինելով տեխնիկական անհրաժեշտ միջոցներից՝ չեչեն գրոհայինների հետախուզությունը գերազանցապես պետք է հիմնված լինի, այսպես կոչված, «խլուրդների» աշխատանքի վրա, որոնք էլ ապահովում են կարևոր տեղեկատվության զգալի մասը։

Նույն՝ հուլիսի 13-ի մահափորձը Չեչնիայի նախագահի պաշտոնակատար Սերգեյ Աբրամովի դեմ կարող է վկայել այս երեք կետերի մասին. գրոհայիններին վաղօրոք հայտնի էր Աբրամովի գտնվելու վայրի և ժամանակի մասին։

Նախագահական ընտրությունները Չեչնիայում

Օգոստոսի 29-ին Չեչնիայում կայացած նախագահական ընտրություններն ի ցույց դրեցին տեղի «առանձնահատկությունները»։

Թեև Ահմադ Կադիրովի սպանությունը վերջինիս կլանից վերցրեց հանրապետության նախագահի պաշտոնը, սակայն Կադիրովների թեյփից (ցեղ)՝ Բենոյ, և Ահմադ Կադիրովի համախոհներից կազմված այդ կլանը շարունակում է, ըստ ամենայնի, հանդիսանալ չեչենական ամենաուժեղ խմբավորումը։

Հոր սպանությունից հետո կլանի ղեկավարությունն անցել է Ահմադ Կադիրովի կրտսեր որդի Ռամզան Կադիրովին (28 տարեկան է), և այդ առումով խոսուն փաստ է վերջինիս նշանակումը Չեչնիայի առաջին փոխվարչապետի պաշտոնում, որը պետք է զբաղվի կառավարության ուժային թևով։ Նշենք, որ, ըստ տարբեր գնահատականների, Ռամզան Կադիրովի, որը նախկինում հոր անվտանգության ծառայության ղեկավարն էր, ենթակայության տակ գտնվող ուժերը կազմում են 3-6 հազար մարդ՝ օրենքի շրջանակներում գործող չեչենական, թերևս, ամենամեծ զինված կազմավորումը[1]։

Կադիրովների Բենոյ թեյփը և կլանն, ընդհանուր առմամբ, Չեչնիայում տիրապետում են շոշափելի ֆինանսատնտեսական կարողությունների։ Կլանին ուժ է տալիս նաև այն, որ նույն գրոհայինների շրջանում այն ուներ (ըստ ամենայնի, այժմ էլ ունի) բավականին ազդեցիկ ներկայացուցիչներ. Ասլան Մասխադովի օրոք Իչկերիայի Հանրապետության պաշտպանության նախարարն էր Մահոմեդ Խամբիևը՝ Բենոյ թեյփի անդամ[2]։

Ուստի պատահական չէ, որ, ըստ որոշ տեղեկությունների, Ռամզան Կադիրովը որոշեց «անձամբ»[3] մասնակցել նախագահական ընտրություններին՝ առաջադրելով Ահմադ Կադիրովի աշխատակազմում որպես խորհրդական աշխատող Վախի Վիսաևի թեկնածությունը[4]։ Նպատակը՝ հոր սպանությունից հետո քաղաքական ազդեցության պահպանումն էր կամ, ավելի ճիշտ՝ հնարավորինս պահպանումը։ Ըստ ամենայնի, Կրեմլի ճնշմամբ և առաջին փոխվարչապետի պաշտոնի դիմաց՝ կրտսեր Կադիրովը այնուհետև հանդես եկավ Ալու Ալխանովի թեկնածության օգտին։

Կադիրովների կլանից զատ, Չեչնիայում իրական ուժ են ներկայացնում ևս երկու խմբավորում՝ Յամադաև եղբայրների միավորումը և Գրոզնիի նախկին քաղաքապետ,

---

[1] Ահմադ Կադիրովն ունի նաև ավագ որդի՝ Զելիմխան Կադիրովը, որն աշխատում է հանրապետության ներքին գործերի համակարգում։ Նա հայտնի է իր բացասական վարքագծով։ Օրինակ, 2003թ. ընթացքում ծեծկռտուքներ կազմակերպելու համար, որոնցից մեկն ուղեկցվել է ավտոմատային հրաձգությամբ, նրան երկու անգամ ձերբակալել է Կիսլովոդսկի ոստիկանությունը։ Նրա նկատմամբ մեղադրանք էր առաջադրվել խուլիգանության համար, սակայն գործը կոծկվել է։

[2] Չպետք է մոռանալ, որ մինչև 1999թ. չեչենական երկրորդ պատերազմը, ինքը՝ Ահմադ Կադիրովը, հանդիսանալով Չեչնիայի հոգևոր առաջնորդ՝ մուֆտի, կանգնած էր Ասլան Մասխադովի կողքին։

[3] Ըստ օրենքի, Չեչնիայի նախագահ կարող է ընտրվել 30 տարին լրացրած անձնավորությունը, իսկ Ռամզան Կադիրովը, ինչպես նշվեց, 28 տարեկան է։

[4] Օրինակ, Գուդերմեսում փակցված նախընտրական պաստառների վրա Վախի Վիսաևը պատկերված էր Ռամզան Կադիրովի հետ միասին։

չեչենական երկու պատերազմներին դաշնային ուժերի կողքին հանդես եկած ու, ըստ էության, չեչենական հետխորհրդային վերնախավին մշտապես ընդդիմադիր Բիսլան Գանտամիրովի միավորումը:

Յամադանների ուժային թևը հանդիսանում է հատուկ նշանակության Восток գումարտակը, որի հրամանատարն է Վեդենոյում սպանված և Ռուսաստանի հերոսի կոչման արժանացած Ջաբրայիլ Յամադանի կրտսեր եղբայր Սուլիմ Յամադանը (նախկին դաշտային հրամանատար): Յամադան եղբայրներից երրորդը՝ Ռուսլան Յամադանը, *Единая Россия* կուսակցության անդամ է և ՌԴ Պետդումայի պատգամավոր: Յամադանների ազդեցությունը հատկապես մեծ է Չեչնիայի երկրորդ քաղաքում՝ Գուդերմեսում. 1999թ. Յամադաններն ապահովեցին քաղաքի անարյուն հանձնումը դաշնային ուժերին:

Բիսլան Գանտամիրովի ուժային կառույցը հանդիսանում հատուկ նշանակության *Запад* գումարտակը, որի հրամանատարն է Սայիդմոհամեդ Կակիևը: Վերջինս հայտնի է Չեչնիայի նախկին նախագահ Ջոհար Դուդաևի դեմ իրականացրած մահափորձով (այդ ժամանակ Կակիևը կորցրեց մի աչքը և ձեռքը):

Բիսլան Գանտամիրովի ազդեցությունը հիմնականում տարածվում է Թերեք գետից հյուսիս ընկած չեչենական տարածքներում (Հյուսիսային (Հարթավայրային) Չեչնիա), որոնք մինչև 1950-ական թթ. վերջը մտնում էին Ստավրոպոլի երկրամասի կազմի մեջ և, ի տարբերություն Լեռնային (Հարավային) Չեչնիայի, գերազանցապես լոյալ են Մոսկվայի նկատմամբ:

Հայտնի են Գանտամիրովի խմբավորման հակասությունները Կադիրովների կլանի հետ: Այդ հողի վրա բազմիցս են արձանագրվել բախումներ *Запад* գումարտակի և Ռամզան Կադիրովի ուժերի միջև: Թեև դաշնային կենտրոնի միջամտությամբ խնդիրները կարծես թե կարգավորվել են, սակայն հակասությունները վերջնականապես հարթված չեն:

Եվ վերջապես, Չեչնիայի ներկայիս նախագահ Ալու Ալխանովի գործոնը: Հավանական է, որ որոշ ժամանակ անց նա փորձելու է ստեղծել իր խմբավորումը՝ սեփական քաղաքական կշիռն ամրապնդելու և Կադիրովների կլանի վերահսկողությունից կամ ազդեցությունից դուրս գալու համար: Այդ տեսանկյունից բացառված չեն հակասությունները Ալու Ալխանով-Ռամզան Կադիրով զույգի միջև:

Ինգուշիայի դեպքերը

Ս.թ. հունիսի 21-ի լույս 22-ի գիշերը Ինգուշիայում տեղի ունեցած իրադարձությունն իր բնույթով շատ ավելի կարևոր է, քան ս.թ. սեպտեմբերի 1-3-ը հյուսիսօսական

Բեսլան քաղաքում կատարվածը: Բեսլանյան իրադարձությունը արժանացավ տեղեկատվական շատ ավելի մեծ ուշադրության, ուստի այն կարող է սխալմամբ թվալ որպես իրավիճակի ցուցիչ: Իրավիճակն Ինգուշիայում հատկապես կարևոր է այն առումով (հարկ է դիտարկել որպես ցուցիչ), որ այն հանդես է գալիս որպես յուրատեսակ կապող օղակ (իր բնույթով) մի կողմից՝ Չեչնիայում, մյուս կողմից՝ հյուսիսկովկասյան այլ հանրապետություններում (Դաղստան, Հյուսիսային Օսիա, Կաբարդինա-Բալկարիա, Կարաչանա-Չերկեսիա, *Աբխազիա*) տիրող իրավիճակների միջև:

Չպետք է մոռանալ, որ մոտ 70 տարի Չեչնիան և Ինգուշիան մեկ հանրապետություն էին (ընդհանուր պետություն), ուստի բնական է, որ իրավիճակն Ինգուշիայում զգալիորեն կապված է Չեչնիայում տիրող իրավիճակի հետ:

Սակայն Ինգուշիայում տեղի ունեցած հունիսյան դեպքերի հիմքում ընկած է նաև տեղի վերնախավի փոփոխության գործընթացը, որն սկսվեց Ինգուշիայի Հանրապետության նախագահի պաշտոնում Ռուսլան Աուշևին (որը հայտնի էր չեչեն գրոհայինների նկատմամբ իր լոյալությամբ) Մուրադ Զյազիկովի փոխարինմամբ: Հետևանքները երկար սպասել չտվեցին, և Զյազիկովը ձեռնամուխ եղավ իշխանության տարբեր ճյուղերի (հատկապես ուժային) վերին ու մասնավորապես միջին օղակներում իր մարդկանց նշանակմանը: Այսինքն՝ սկսվեց ազդեցությունների վերաբաշխում Ինգուշիայի քաղաքական և տնտեսական դաշտերում;

Ըստ որոշ տեղեկությունների, ս.թ. հունիսի 21-ի լույս 22-ի գիշերը գրոհայինների մեջ առանձնանում էին Ինգուշիայի ներքին գործերի համակարգի աշխատակիցները, որոնք, պետք է ենթադրել, դասվում են Ռուսլան Աուշևի կողմնակիցների թվին: Հիմնականում այդ պատճառով է, որ դեպքերի հետ կապված՝ իրավապահ մամիները չունեցան լուրջ բացահայտումներ[1]:

Բեսլանի շուրջ

Բեսլանյան իրադարձությունը ստիպում է ուշադրություն դարձնել երեք հանգամանքի վրա:

Առաջին՝ գրոհայինների կողմից դպրոցի զավթումը ցույց տվեց, որ առկա պայմաններում պահակետերի (*блокпост*) համակարգն արդյունավետ չի աշխատում: Ավելին՝ այն վնաս է պատճառում:

[1] Ըստ ամենայնի, ինգուշական դեպքերի պատճառը ոչ թե «արտաքին» հարձակումն է Չեչնիայից կամ Վրաստանից, այլ ներքին լարվածությունը, ինչպես նաև, բնականաբար, այն, որ Ինգուշիան մաս է կազմում Հյուսիսային Կովկասում առկա իրավիճակի:

Երկրորդ՝ փաստորեն, ահաբեկչական յուրաքանչյուր գործողությունից հետո գրոհայինները փորձում են վերացնել նախորդ անգամվա սեփական բացթողումները.

- Բեսլանի թիվ 1 դպրոցում գրոհայինները կազմակերպել էին պայթեցման լրացուցիչ համակարգ, որը գործի էր գցվելու, եթե գրոհի ժամանակ սպանվեր պայթեցման *(ինքնապայթեցման)* համար պատասխանատու գրոհայինը, որի ձեռքը մշտապես պետք է գտնվեր պայթյունը հրահանգող կոճակի վրա,
- ի տարբերություն «Նորդ-Օստի» (հոկտեմբերի 23-26, 2002թ., զոհվեցին 129 հոգի), որտեղ պայթուցիկների մի մասը չէր բերվել մարտական վիճակի, բեսլանյան դպրոցում այդ «թերությունը» շտկված էր,
- ըստ տեղեկությունների, դպրոցի շենքի զավթումից անմիջապես հետո գրոհայիններ-ը, որոնք հակագազով էին, կազմակերպել էին տարածքի օդափոխության գործը և իրենց հետ տարել շների, որոնք կարող էին անմիջապես զգալ գազի առկայությունն օդում,
- ըստ որոշ տեղեկությունների, գրոհայինների հետ դպրոցի շենքում գտնվող ինքնասպան «սև այրիները» յուրաքանչյուր 3-4 ժամը մեկ երակային ներարկման միջոցով (կաթետերի միջոցով) ինչ-որ նյութ էին ընդունում (ենթադրելի է՝ հոգեմետ). նպատակը, թերևս, «սև այրիների» հավանական փախուստը կանխելն էր, ինչը, ըստ ռուսական անվտանգության մարմինների, տեղի է ունենում ահաբեկչական որոշ գործողությունների ժամանակ:

Երրորդ և ամենակարևորը՝ բեսլանյան իրադարձությունը կարող է օս-ինգուշական նոր հակամարտության պատճառ հանդիսանալ: Ս.թ. սեպտեմբերի 3-ի լույս 4-ի գիշերը Վլադիկավկազի (Հյուսիսային Օսիայի մայրաքաղաքը) մոտ գտնվող Սունժա բնակավայրից մոտ *300 զինված օսեր* շարժվեցին դեպի գերազանցապես ինգուշներով բնակեցված Կարցա գյուղը: Զինված խմբավորման առաջխաղացումը հաջողվել է կասեցնել Հարավային Օսիայի նախագահ Էդուարդ Կոկոյտայի անձնական ջանքերի շնորհիվ:

Ուշագրավ է, որ Հյուսիսային Օսիայում տարածված լուրերի համաձայն, արդեն օգոստոսի 30-31-ին Վլադիկավկազում գրեթե չէր մնացել ոչ մի ինգուշ և չեչեն: Ամեն դեպքում՝ դաշնային կենտրոնը լուրջ ջանքեր է գործադրում իրավիճակը վերահսկողությունից դուրս չթողնելու համար. ուժեղացվել են Հյուսիսային Օսիա-Ինգուշիա սահմանային անցակետերը և սահմանապահ ուղեկալները, ԱԴԾ կենտրոնական մասից հյուսիսօսական և ինգուշական բաժանմունքներ են գործուղվել նոր սպաներ:

Ինգուշիայի Հանրապետություն

Ընդհանրացումներ

Ահմադ Կադիրովի սպանությունը, հունիսյան հարձակումը Ինգուշիայում և բեսլանյան իրադարձությունը ցույց են տալիս, որ Ռուսաստանի անվտանգության համակարգը Հյուսիսային Կովկասում գործում է փոքր արդյունավետությամբ՝ անվտանգության ցանցը (կառուցվածքային առումով) գրեթե չի աշխատում, կամ՝ ձևավորված անվտանգության համակարգում դաշնային կենտրոնն ունի սահմանափակ ազդեցություն: Եթե նկատի ունենանք, որ ներկայում անվտանգության առումով Հյուսիսային Կովկասը հանդիսանում է ՌԴ ամենաթեժ ուղղությունը, և, ինչպես մենք տեսնում ենք, Մոսկվան այստեղ ունի բավականին լուրջ բացթողումներ, ապա կարելի է եզրակացնել, որ, ընդհանուր առմամբ, ՌԴ պետանվտանգության համակարգը գտնվում է ցածր մակարդակի վրա:

Նման իրավիճակի հիմնական պատճառը ԽՍՀՄ փլուզմամբ զուգորդվող և այդ փլուզումից հետո էլ ավելի արագացած պետանվտանգության համակարգի ընդհանուր քայքայումն էր: 1991թ. ամռանը և 1993թ. աշնանը Ռուսաստանի պետանվտանգության մարմիններում տեղի ունեցավ աշխատակիցների զանգվածային ազատում կամ համակարգից վերջիններիս զանգվածային հեռացում: Արդյունքում՝ ծագեց անհրաժեշտ քանակությամբ և որակով կադրերի խնդիրը: Այսինքն՝ տեղի ունեցավ աշխատանքի արդյունավետության անկում, անգամ՝ կտրուկ անկում: Նույն ռուսական աղբյուրների համաձայն, պետանվտանգության մարմիններում առկա իրավիճակն իր արտացոլումն է գտնում Չեչնիայում, որտեղ գործակալական ցանցի հետ աշխատանքը երբեմն հանգեցնում է հակառակ արդյունքների:

Լուրջ խնդիր է ՌԴ իրավապահ մարմիններում տիրող կոռուպցիան: Գաղտնիք չէ, որ $5-15-ով Հյուսիսային Կովկասում կարելի է խուսափել, թերևս, բոլոր պահակետերի ստուգումներից: Ըստ ռուսական ԶԼՄ-ի հրապարակումների, անգամ սեպտեմբերի 1-3-ը (բեսլանյան իրադարձության օրերին) միջինը $40-50-ով կարելի էր, փաստորեն, անարգել հասնել մինչև գործողության վայրը:

Նույն ռուսական լրատվամիջոցների հրապարակման համաձայն, ՌԴ ՆԳՆ Սեփական անվտանգության գլխավոր վարչության շրջանակներում գործում է բանավոր հրաման՝ ուշադրություն չդարձնել $50 հազ.-ից քիչ կաշառակերության դեպքերին՝ բացառություններ անելով կարևոր գործերով զբաղվողների և նախարարության աշխատակիցների համար:

Ահաբեկչությունը Ռուսաստանի Դաշնությունում







Նման պայմաններում, թերևս, հասկանալի է դառնում «Վերին Լարս» անցակետի փակումը։ ՌԴ պետանվտանգության համակարգը, բացի նման կարգի հրամաններից, փաստորեն, ի վիճակի չէ տեղերում արդյունավետությամբ կատարել իր վրա դրված պարտականությունները[1]։

Ստեղծված իրավիճակը դրդում է դաշնային կենտրոնին պետանվտանգության համակարգում իրականացվող բարեփոխումների հարցում զգալի ուժեր կենտրոնացնել հյուսիսկովկասյան ուղղությամբ։ Այս աշնանից Հարավային դաշնային շրջանում (ՀԴՇ, ռուս.՝ *ЮФО, Южный федеральный округ*) կրկին ստեղծվելու են տեղերում ուժային կառույցների գործունեությունը համակարգող օպերատիվ կառավարման խմբերը։ Դեռևս ս.թ. օգոստոսի կեսերին ՌԴ նախագահին են ներկայացվել ՆԳՆ այն գնդապետները, որոնք պետք է մեկնեն ՀԴՇ՝ որպես այդ խմբերի ղեկավարներ, միաժամանակ հանդիսանալով ՌԴ ՀԴՇ 13 սուբյեկտներում գործող հակաահաբեկչական հանձնաժողովների ղեկավարների[2] առաջին տեղակալները։ Նրանց տրամադրության տակ են դրվելու միջինը 70 հոգուց բաղկացած հատուկ նշանակության ջոկատներ։

Հարկ է առանձնացնել նաև ՌԴ կառավարության աշխատակազմի ղեկավար Դմիտրի Կոզակի նշանակումը ՀԴՇ-ում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցչի և ս.թ. սեպտեմբերի 13-ին ստեղծված ՀԴՇ-ում գործադիր իշխանության դաշնային մարմինների գործունեությունը համակարգող հանձնաժողովի ղեկավար։ Դ.Կոզակը համարվում է Վ.Պուտինի ամենամտերիմ մարդկանցից մեկը, որը պետք է գործեր դաշնային մակարդակում, և նրա նոր նշանակումը ցուց է տալիս հյուսիսկովկասյան խնդիրների կարևորությունը Կրեմլի համար։

Մոսկվան ձգտում է պետանվտանգության ոլորտում վերափոխումներ անցկացնել նաև դաշնության մակարդակով։ Ս.թ. ամռանը ՌԴ ԱԴԾ-ում կրճատման ենթարկվեցին տնօրենի (ծառայության ղեկավարի) 12 տեղակալները։ Ներկայում տեղակալները չորսն են՝ երկու առաջին տեղակալ (որոնցից մեկը Սահմանապահ ծառայության ղեկավարն է) և երկու տեղակալ։ Տեղակալների կրճատումը կարող է հանգեցնել համակարգային փոփոխությունների։ Օրինակ՝ նախատեսվում է, որ ԱԴԾ-ում գործող դեպարտամենտները վերակազմավորվելու են ծառայությունների՝ գործառնական որոշակի վերափոխումներով հանդերձ։

---

[1] Նշենք, որ «Վերին Լարս» անցակետի փակման գործողությունը գտնվում էր ԱԴԾ իրավասության ներքո։

[2] Հակաահաբեկչական հանձնաժողովները ղեկավարելու են ՌԴ ՀԴՇ 13 սուբյեկտների առաջին դեմքերը՝ նահանգապետեր, նախագահներ։

Ի վերջո, քիչ հավանական է, որ առաջիկա 1-2 տարիների ընթացքում ՌԴ պետանվտանգության համակարգը, գտնվելով առկա իրավիճակում և իր վրա կրելով ընթացող վերափոխումները, կարողանա արդյունավետորեն դիմագրավել գոյություն ունեցող մարտահրավերները: Այդ առումով առաջին լուրջ արդյունքները կարելի է սպասել նշված ժամկետի վերջում: Իսկ ներկայում գերիշխելու են գերազանցապես կոշտ և ոչ այնքան արդյունավետ միջոցները (օրինակ՝ նույն «Վերին Լարսի» փակումը կամ մաքրազտումները Չեչնիայում, Ինգուշիայում):

Ռազմավարական հետևություններ

Ներկայացվածը թույլ է տալիս կատարել որոշակի հետևություններ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի:

Համակարգային մարտահրավերի խնդիրը

Չնայած անցած հինգ տարիներին Վ.Պուտինի պաշտոնավարման[1] ժամանակ գործադրած ջանքերին, Ռուսաստանը, փաստորեն, շարունակում է գտնվել համակարգային ճգնաժամի մեջ: Անուղղակի կերպով այդ են վկայում ս.թ. սեպտեմբերի 4-ի ՌԴ նախագահի հեռուստաելույթը և նրա իսկ առաջարկությունները՝ արված ս.թ. սեպտեմբերի 13-ին ՌԴ կառավարության ընդլայնված նիստում[2]: Կրեմլի նոր առաջարկությունների նպատակը մեկն է՝ Ռուսաստանի կառավարման կառույցում փոփոխությունների օգնությամբ հնարավորինս վերացնել ԽՍՀՄ փլուզումից հետո ի հայտ եկած համակարգային խնդիրները, որոնք անցած տասներեք տարիների ընթացքում, փաստորեն, վերաճել են բավականին լուրջ մարտահրավերների՝ հարցականի տակ դնելով անգամ ՌԴ տարածքային ամբողջականությունը[3]:

---

[1] Հարկ է Վ.Պուտինի պաշտոնավարման ժամկետը հաշվել 1999թ. օգոստոսի 9-ից, երբ ՌԴ նախագահ Բորիս Ելցինը ԱԴԾ տնօրեն Վլադիմիր Պուտինին նշանակեց ՌԴ վարչապետի պաշտոնակատար՝ վարչապետի պաշտոնից ազատելով Սերգեյ Ստեպաշինին: Այդ նշանակումից հետո Վ.Պուտինը երկու անգամ՝ 2000թ. մարտի 26-ին և 2004թ. մարտի 14-ին, ընտրվել է ՌԴ նախագահ:

[2] Հիշեցնենք, որ այդ առաջարկությունների մեջ էական տեղ գրավեցին հետևյալ դրույթները. ՌԴ բոլոր՝ 89 սուբյեկտների ղեկավարները, ըստ էության, պետք է նշանակվեն ՌԴ նախագահի կողմից, այլ ոչ թե ընտրվեն, ինչպես ներկայում է, և ՌԴ Պետդուման պետք է ձևավորվի միայն համամասնական կարգով (կուսակցական ցուցակներով):

[3] Ըստ էության, Կրեմլի նոր նախաձեռնությունների (Կրեմլի կատարած եզրակացության) հիմքում ընկած է հետևյալ դրույթը. անգամ Չեչնիայի խնդրի ռազմաքաղաքական լուծումից հետո Ռուսաստանում առկա համակարգը՝ գաղափարախոսական, կառուցվածքային, քաղաքական *(տնտեսակա՞ն)*, նպաստավոր պայմաններ է ստեղծում ՌԴ կազմալուծման համար:

Գոյություն ունեցող իրավիճակը հատկապես արտացոլվում է Հյուսիսային Կովկասում ընթացող քաղաքական գործընթացներում: Դեռևս 1970-ական թթ. վերջից - 1980-ական թթ. սկզբից այնտեղ սկսվեց ներկայում գոյություն ունեցող քաղաքական համակարգի ձևավորումը, որը հատկապես արագացավ Խորհրդային Միության փլուզումից հետո: Այդ համակարգի էությունն է ինստիտուցիոնալացված ցեղային-կլանային բուրգը, որը որպես գաղափարախոսություն վերցրեց ազգային անկախության վերաբերյալ դրույթը, ինչն, անշուշտ, դաշնային կենտրոնի գաղափարախոսական դաշտի փլուզման նշան էր:

Նշված համակարգը, որն իր տրամաբանությամբ խորթ է դաշնության քաղաքական համակարգին, լուրջ խոչընդոտ է տեղերում դաշնային կենտրոնի քաղաքականության իրականացման համար: Եվ պետք է փաստել, որ մինչ օրս Կրեմլը չի կարողացել վերջնականապես լուծել իր համար գոյություն ունեցող այդ խնդիրը[1]: Ուստի, տարօրինակ չպետք է թվա, թե ինչ բարձր մակարդակով դաշնային կենտրոնը լուծեց իշխանափոխության հարցը Չեչնիայում, երբ ս.թ. օգոստոսի 22-ին Սոչիում Վլադիմիր Պուտինը հանդիպեց Ալու Ալխանովի[2] և Ռամզան Կադիրովի հետ[3]:

Հիմնական խնդիրը, որն առաջիկա տարիներին Մոսկվան ուղղակի ստիպված է լուծել, Ռուսաստանի նոր *(պետական՞)* գաղափարախոսության հարցն է: Ընդ որում, այդ գաղափարախոսությունն իր խորությամբ և արժեհամակարգով պետք է գերազանցի ազգային գաղափարախոսական դրույթներին, իսկ իսլամ դավանող ազգերի պարագայում՝ նաև կրոնական գաղափարախոսական դրույթներին, այլապես՝ Կրեմլը չի կարող լուծել ԽՍՀՄ փլուզումից հետո իր առջև ծառացած այդ ամենահիմնական մարտահրավերը՝ գաղափարախոսության հարցը[4]:

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել այն հագամանքի վրա, որ, ըստ էության, մոտ են այդ մարտահրավերին բախվելու (կամ արդեն իսկ բախվել են) եվրասիական

---

[1] Բավականին ցայտուն կերպով այդ խնդիրը դրսևորվեց ս.թ. հոկտեմբերի 3-ին Աբխազիայում կայացած նախագահական ընտրությունների առնչությամբ. Կրեմլի թեկնածուն գործող վարչապետ Ռաուլ Խաջիմբան (ընտրություններից առաջ՝ ս.թ. օգոստոսի 29-ին, Սոչիի մոտ գտնվող «Դագոմիս» առողջարանային համալիրում Վլադիմիր Պուտինը ցուցադրաբար հանդիպեց Ռաուլ Խաջիմբայի հետ), փաստացի պարտվել է «ընդդիմության» թեկնածուի՝ նախկին վարչապետ, Черноморэнерго պետական ընկերության գլխավոր տնօրեն Սերգեյ Բագապշին:

[2] Ս.թ. օգոստոսի 29-ին Ալու Ալխանովը ընտրվեց Չեչնիայի նախագահ:

[3] Ստեղծված իրավիճակից Կրեմլը, թերևս, փորձում է նախ և առաջ դուրս գալ տեղի վերնախավերի փոփոխությամբ: Վերջին տարիներին հյուսիսկովկասյան տարածաշրջանում իշխանության եկան մարդիկ, որոնք ավելի հավատարիմ են դաշնային կենտրոնին՝ Ալեքսանդր Ձասոխով (Հյուսիսային Օսիա, նախագահ է ընտրվել 1998թ. հունվարի 10-ին, չորս տարով վերընտրվել է 2002թ. հունվարի 27-ին), Մուրատ Զյազիկով (Ինգուշիա, նախագահ է ընտրվել 2002թ. ապրիլի 7-ին), Ալու Ալխանով (Չեչնիա, նախագահ է ընտրվել 2004թ. օգոստոսի 29-ին): Այդ ցուցակին, թերևս, կարելի է ավելացնել նաև Սերգեյ Բագապշի անունը (անշուշտ, եթե նա վերջնականապես հաղթանակ տանի): Ընդհանուր առմամբ, Կրեմլի համար Հյուսիսային Կովկասում գոյություն ունի վերնախավերի փոփոխության խնդիրը:

[4] Փաստորեն, նույն՝ գաղափարախոսական մարտահրավերն էր, որը փլուզեց Խորհրդային Միությունը:

մյուս հսկաները՝ Եվրամիությունը (ԵՄ)[1], Չինաստանը և իսլամական աշխարհը[2]։ Փոխարենը, այն որպես զենք է կիրառում նրանց աշխարհաքաղաքական հակառակորդը՝ Միացյալ Նահանգները[3], որը նպատակ ունի կանխել իրենից ավելի ուժեղ աշխարհաքաղաքական միավորի ի հայտ գալը[4]։

Աշխարհաքաղաքական շարժերը

Հյուսիսային Կովկասի «ակտիվացման» գործում էական պատճառ են այն աշխարհաքաղաքական շարժերը, որոնք սկզբնավորվել են կովկասյան տարածաշրջանում վերջին մեկ-երկու տարիների ընթացքում։

Թերևս, գործընթացը սկսվել է Մոսկվայի նախաձեռնությամբ, որը մոտավորապես 1999-2000թթ. նպատակ դրեց վճռական առավելության հասնել աշխարհառազմավարական (գեոստրատեգիա) առումով կարևոր երկու երկրներում՝ Ուկրաինայում և Վրաստանում՝ կանխելու նրանց վերջնական հեռացումը Ռուսաստանից։ Թե՛ Ուկրաինայում, թե՛ Վրաստանում ռուսական այդ նախաձեռնությունն արտահայտվեց իշխող վերնախավերում Մոսկվայի ազդեցության մեծացմամբ, ինչն էլ որոշակի առումով իր արտացոլումը ստացավ այդ երկրների արտաքին քաղաքականության մեջ։

Վրաստանում, սակայն, այդ գործընթացը, փաստորեն, ավարտվեց Ռուսաստանի անհաջողությամբ. Շևարդնաձեն հրաժարական տվեց, իշխանության եկավ Արևմուտքի «մարդը» համարվող Սահակաշվիլին։

Ուկրաինայում այդ գործընթացը շարունակվում է և իր հանգուցալուծումը կստանա ս.թ. հոկտեմբերի 31-ի նախագահական ընտրություններով (Յանուկևիչ (Ռուսաստան) – Յուշչենկո (ԱՄՆ, Եվրամիությունն)։

Կովկասի պարագայում, ընդհանուր առմամբ, Մոսկվան ունեցավ որոշակի հաջողություններ. աննախադեպ մեծացավ Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանում (հայ-ռուսական ռազմական համագործակցության խորացումը և վերջին շրջանի տնտե-

---

[1] Թերևս, այս կերպ կարելի բացատրել ԵՄ վերլուծական մարմիններում առկա այն կարծիքը, թե ԵՄ-ին հարևան հակամարտությունները (մասնավորապես, Հարավային Կովկասի պարագայում) հարկ է գերազանցապես լուծել՝ ելնելով տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքից։

[2] Ի դեպ, նաև այդ հանգամանքը կարող է նպաստել նրանց աշխարհաքաղաքական գծերի մերձեցմանը՝ հիմքում ունենալով ազգային-անկախական շարժումները կանխելու նպատակը։

[3] Այդ առումով, Միացյալ Նահանգներից զատ, կարելի է նշել նաև նրա դաշնակիցներ Մեծ Բրիտանիայի, Իսրայելի, անգամ՝ Ավստրալիայի անունները։

[4] Մերձավոր Արևելքում Վաշինգտոնի վարած «ատոմիզացիայի» ռազմավարությունը, որի հիմնական նպատակն է ազգային պետությունների կամ միավորների ստեղծման միջոցով կանխել ազգ-պետություն միավորից ավելի բարձր համակարգի («կայսրության», Մերձավոր Արևելքի դեպքում՝ «իսլամական կայսրության») երևան գալը (օրինակ՝ «Նոր խալիֆաթ»), կարելի է մեծ հաջողությամբ կիրառել նաև Եվրամիության, Ռուսաստանի և Չինաստանի պարագաներում։

սական գործարքները), 2003թ. հոկտեմբերի 15-ին Իլհամ Ալիևի ընտրությունը Ադրբեջանի նախագահի պաշտոնում, երբ Ռուսաստանը, փաստորեն, պաշտպանեց ադրբեջանական վերնախավի թեկնածուին՝ Իլհամ Ալիևին, նպաստեց ռուս-ադրբեջանական հարաբերությունների որոշակի ջերմացմանը և, վերջապես, Չեչնիայում սպանվեցին կամ գերի հանձնվեցին գրոհայինների մի շարք հայտնի ղեկավարներ[1]:

Բայց իրավիճակը սկսեց փոխվել 2003թ. նոյեմբերին տեղի ունեցած վրացական «վարդերի հեղափոխությամբ», որը հարկավոր է դիտարկել որպես ամերիկյան աշխարհաքաղաքական նախագիծ (*project*): Այնուհետև գործընթացը (աշխարհաքաղաքական ուղղությունը, շարժը) ճակատային մասով հարվածեց Հյուսիսային Կովկասին[2]: Ռուսաստանի փորձը վրաց-օսական հակամարտության միջոցով հասնել հաջողության՝ առայժմ ունեցել է, փաստորեն, մարտավարական նշանակություն: Փոխարենը, Ահմադ Կադիրովի սպանությամբ, Ինգուշիայում տեղի ունեցած հունիսյան հարձակումով և բեսլանյան դեպքով ստեղծված իրավիճակը «դրդեց» Ռուսաստանին գոնե առժամանակ «փակվել» Հարավային Կովկասից կամ «թողնել» Հարավային Կովկասը:

Պետք է ենթադրել, որ եթե Մոսկվան «Բեսլանին» պատասխանեց «Վերին Լարս» անցակետը փակելով, ապա Հարավային Կովկասում, թերևս, տեղի ունենան աշխարհաքաղաքական լուրջ վերադասավորումներ՝ ոչ հօգուտ Ռուսաստանի: Այդ առումով հարկ է նշել, որ թե՛ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շահագործումը[3], թե՛ Վրաստանում և Ադրբեջանում ամերիկյան շարժուն զորամիավորումների հնարավոր տեղակայումը, անշուշտ, կմեծացնեն Վաշինգտոնի ազդեցությունը տարածաշրջանում:

Սակայն դեռ վաղ է հանգել որոշակի վերջնական (անգամ այս ժամանակահատվածի համար վերջնական) հետևությունների: Պետք չէ բացառել, որ առաջիկա ձմռան ընթացքում ի հայտ գան նոր հանգամանքներ, որոնք թույլ կտան խոսել ռուսական աշխարհաքաղաքականության մասին:

---

[1] Փաստորեն, սկսած 1999-2000թթ. Հյուսիսային Կովկասում ռազմավարական նախաձեռնությունն անցավ Կրեմլի ձեռքը, երբ ջախջախվեցին Իչկերիայի Հանրապետության հիմնական ռազմական ուժերը, իսկ քաղաքական առումով Մոսկվան, ընդհանուր առմամբ, ուժեղացրեց վերահսկողությունը ողջ Հյուսիսային Կովկասում: Ավելին՝ նույն ռազմաքաղաքական առումով 2004թ. սկսվեց ոչ հօգուտ գրոհայինների: Ս.թ. մարտին դաշնային ուժերին կամավոր հանձվեցին Ասլան Մասխադովի մերձավորագույն շրջապատի երեք ներկայացուցիչներ՝ Իչկերիայի պաշտպանության նախարար Մահոմեդ Խամբիևը, գրոհայինների հատուկ բաժնի պետ Բորիս Այդամիրովը և Մասխադովի թիկնազորի պետ Շաա Տուրլաևը, իսկ ս.թ. ապրիլին դաշնային ուժերի հետ մարտում զոհվեց Աբու ալ-Վալիդը՝ Խատաբի մահից հետո Չեչնիայում գործող միջազգային ահաբեկիչ-գրոհայինների ղեկավարը:

[2] Տե՛ս վերը ներկայացված «Հյուսիսային Կովկասի «ակտիվացումը» բաժինը:

[3] Նախատեսված է նավթամուղը շահագործման հանձնել 2005թ. հունվարին:

Եզրակացություն. Երևանի գործոնը

Ըստ էության, Հարավային Կովկասը և, մասնավորապես, Հայաստանը մուտք են գործել նոր գործընթացների մի փուլ, որի առանձնահատկությունը կարող է կայանալ տարածաշրջանում գոյություն ունեցող աշխարհաքաղաքական փոխդասավորվածության վերաձևումը: Ընդ որում, ակնհայտ է, որ կովկասյան տարածաշրջանում գործող գրեթե բոլոր ուժի կենտրոնները (ՌԴ, ԱՄՆ, ԵՄ, Իրան, Թուրքիա, անգամ՝ Չինաստան) ձգտում են հասնել էական հաջողությունների, ինչը միջին ժամանակահատվածի (10-20 տարի) կտրվածքով կապահովի սեփական գերիշխանությամբ կամ գերազանցապես սեփական գերիշխանությամբ պայմանավորված status quo-ն՝ ձևավորվելիք նոր համակարգը: Նման ձգտումները պայմանավորված են նաև Արևելյան Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Կենտրոնական ու Հարավային Ասիաներում ընթացող գործընթացներով, որոնք *մոտ են որոշակի նոր համակարգի ձևավորմանը (Նոր եվրասիական կարգ, New Eurasian Order)*[1], ուստի Հարավային Կովկասը պարզապես չի կարող դուրս մնալ այդ գործընթացից:

Հավանական է, որ, տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների տրամաբանությանը համաձայն, «ակտիվացումներ» ընթանան հյուսիսկովկասյան այլ հանրապետություններում[2] ևս, ինչպես նաև Վրաստանում[3], Ադրբեջանում և անգամ՝ Հայաստանում[4]:

Հայաստանը Հարավային Կովկասի միակ երկիրն է, ուր, փաստորեն, ռուսական ազդեցությունը գերիշխում է այլ ուժի կենտրոնների (ԱՄՆ, ԵՄ, Իրան, Թուրքիա) ազդեցությանը: Այդ գործոնը թույլ է տալիս կատարել մի քանի հետևություններ վերոհիշյալի համատեքստում:

---

[1] «Նոր եվրասիական կարգի» տակ նախ և առաջ պետք է հասկանալ Միացյալ Նահանգների ձգտումը Արևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներից ստեղծել անվտանգության մի համակարգ, որը զուրկ կլինի արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերի ազդեցությունից (օրինակ՝ ԵՄ, ՆԱՏՕ, ԱՊՀ և այլն) և որտեղ գերակշիռ կլինի ամերիկյան ազդցությունը:

[2] Անհրաժեշտ է նշել, որ «ակտիվացման» համար դրական պայմաններ առկա են հատկապես Դաղստանում, որտեղ, փաստորեն, միջէթնիկ լարվածության հիմքի վրա իշխող վերնախավի ներսում կան լուրջ հակասություններ: Իրավիճակը հանգիստ չէ նաև Կարաչաևա-Չերկեսիայում, որ հոկտեմբերի 18-ին սպանվեց հանրապետության փոխվարչապետ Անսար Տեբուևը (ղեկավարում էր կառավարության ուժային և սոցիալական թևերը), իսկ Կարչաևա-Չերկեսիայի նախագահ Մուստաֆա Բատիդևի փեսան Ալի Կայիտովը (Кавказцемент ընկերության գլխավոր տնօրեն) ս.թ. հոկտեմբերի 22-ից գտնվում է հետախուզման մեջ՝ տեղի քիմիական ձեռնարկության յոթ բաժնետերերի առևանգման (ս.թ. հոկտեմբերի 11) և սպանության համար:

[3] Վրաստանի պարագայում Հայաստանի համար կարող են հատկապես լուրջ խնդիրներ դառնալ հաղորդակցական ուղիների, գազամուղի և Ջավախքում տիրող իրավիճակի հարցերը:

[4] Նշված միտքը կարելի է վերաձևակերպել, թե ժամանակն է, որ «ակտիվացումներ» ընթանան հյուսիսկովկասյան այլ հանրապետություններում, Վրաստանում, Ադրբեջանում և անգամ՝ Հայաստանում:

Չպետք է բացառել, որ որոշակի զարգացումների արդյունքում «բեսլանյան» կամ համարժեք այլ սցենարներ կրկնվեին *(կրկնվե՞ն)* նաև Հայաստանում: Ավելին, հարկ է ենթադրել, որ «ակտիվացումները» հենց Հյուսիսային Կովկասում *(ժամանակավորապե՞ս)* դուրս թողեցին Հայաստանը այդ գործընթացից:

Սակայն մյուս կողմից Հայաստանը խնդիրներ ունեցավ՝ կապված «Վերին Լարս» անցակետի շուրջ ստեղծված ճգնաժամի հետ, երբ, փաստորեն, անտեսվեցին մեր շահերը: Այսինքն՝ ամեն դեպքում մեր երկիրը զերծ չմնաց այդ գործընթացների բացասական հետևանքներից: Ի հավելումն, Իրաք հայկական ստորաբաժանում ուղարկելը, «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրում ներգրավվելը (ընդհանուր առմամբ՝ Երևան-Վաշինգտոն հարաբերություններում նոր զարգացումները) նույնպես կարող են այստեղ «ակտիվացման» պատճառներ հանդիսանալ՝ հիմքում ունենալով կովկասյան տարածաշրջանում առկա աշխարհառազմավարական նպատակների և ընթացող աշխարհաքաղաքական շարժերի տրամաբանությունը:

Ամեն դեպքում, հարկ է նշել, որ գոյություն ունի սպառնալիք, թե առաջիկա ժամանակահատվածում Երևանը կարող է բախվել աշխարհաքաղաքական մարտահրավերների, որոնց արդյունքներից, թերևս, հանդիսանան ներքաղաքական լարվածությունը կամ ապակայունացումը, ինչպես նաև ֆինանսատնտեսական դժվարությունները:

Մեր կարծիքով, աշխարհաքաղաքական առումով Հայաստանի շահերից չի բխում Հարավային Կովկասում Ռուսաստանի հետագա թուլացումը[1] (կամ վերջնական հեռացումը), որը կարող բացասական ազդեցություն ունենալ ողջ տարածաշրջանի համար (ռազմաքաղաքական հավասարակշռության խախտում, ֆինանսատնտեսական հավանական կորուստներ): Ռուսաստանը մեզ համար կարևոր է թե՛ ռազմաքաղաքական[2], թե՛ տնտեսական առումներով: Հատկապես վերջին պարագայում հարկ է ընդգծել ռուսական շուկայի կարևորությունը հայրենի տնտեսության աճի համար:

Մյուս կողմից՝ Հայաստանի շահերից է բխում համագործակցությունը ԱՄՆ-ի և Եվրամիության հետ, ինչը լրացուցիչ հսկայական հնարավորություններից զատ[3], կոչված է փոքրացնելու հավանական վտանգները (Արցախի հարցը, զարգացումները միջազգային կառույցներում և այլն):

---

[1] Մեր պարագայում նույնը վերաբերում է Իրանին:

[2] Չպետք է մոռանալ, որ Հայաստանն անդամակցում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը և հանդիսանում է նրա հարավային (կովկասյան) թևի պատասխանատուն:

[3] «Լրացուցիչ հնարավորությունների» մեջ նաև պետք է հասկանալ Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող այլընտրանքային ճանապարհների խնդիրը: Օրինակ, հայ-թուրքական սահմանի վերաբացման հարցը, որը կարծես կրկին կարևոր դարձավ «Վերին Լարս» անցակետի փակումով:

Ընդհանրացնելով՝ *status quo*-ի ցանկացած արմատական փոփոխություն ի վիճակի է լուրջ խնդիրներ առաջացնել հարավկովկասյան կայունության համակարգում, որի առաջին նշանները այլևս առկա են: Այդ առումով, Հայաստանի համար կարևոր նշանակություն ունի ռուս-վրացական հարաբերությունների կարգավորումն, ինչը զգալիորեն կնպաստի լարվածության թուլացմանը Հարավային Կովկասում:

Այսինքն՝ *status quo*-ն կամ իրավիճակը, որը մոտ է status quo-ին, Հայաստանի համար ամենաձեռնտու տարբերակն է, ինչը թույլ կտա կարգավորել և ամրացնել հայրենի քաղաքական համակարգը և շարունակել առկա տնտեսական աճը՝ շեշտը դնելով, սակայն, որակական ձեռքբերումների վրա (վերարտադրվող և զարգացող տնտեսական համակարգ):

Ըստ ամենայնի, ընթացող գործընթացների համատեքստում առաջիկա ժամանակահատվածում Հայաստանի համար նոր կարևորություն են ձեռք բերելու իր անմիջական երկու հարևանները՝ Վրաստանն ու Իրանը: Հարաբերությունները Թեհրանի ու Թբիլիսիի հետ Երևանի համար դառնալու են ազգային անվտանգության կարևոր գործոններ: Հատկապես վերջինիս պարագայում հարկ է ընդգծել ծավալուն աշխատանքի այժմեականությունը:

Սարգիս Հարությունյան